«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ

Ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները

1. Պարբերականում տպագրության են գիտական հոդվածներ, որոնք համապատասխանում ենհետևյալ ուղղվածությանը՝ **հանգիտություն, վիմագրություն, ազգագրություն, պատմություն, թանգարանագիտություն, արվեստաբանություն, ճարտարապետություն**:
2. Ներկայացվող հոդվածի լեզուն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:
3. Համակարգչային շարվածքը՝ MS Word ծրագիր: Էջի ֆորմատը՝ 170*240 մմ, լուսանցքները բոլոր կողմերից՝ 20 մմ:
4. Տեքստի տառատեսակը՝ հայերեն՝ Sylfaen Unicode, ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman, 12 տառաչափով, 1,5 տողամեջով:
5. Ծավալը՝ 7-20 էջ՝ ներառյալ ամփոփագրերը:
6. Առաջին էջի վերին տողի կենտրոնում 13 տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով՝ տողի կենտրոնում 12 տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ)ը, գիտական աստիճանը, կոչումը: Մեկ տող ներքև՝ տողի կենտրոնում 12 տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է կազմակերպությունը, քաղաքը և երկիրը, իսկ ներքևի տողին՝ կենտրոնում, 12 տառաչափով՝հեղինակի էլ. փոստի հասցեն:
7. Մեկ տող բաց թողնելով՝ 12 տառաչափով, շեղատառ (Italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի լեզվին համապատասխան ամփոփագիրը (аннотация, abstract)՝ 150-200 բառի սահմաններում, ուր պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները:
8. Մեկ տող բաց թողնելով՝ գրել «Հիմնաբառեր»՝ 7-10 բառ կամ բառակապակցություն (երեք տողի սահմաններում):

9. Հոդվածի լեզվից տարբեր երկու լեզուներով ամփոփագրերը՝ համապատասխան հիմնաբառերով, հաջորդում են աշխատանքի հիմնական տեքստին՝ մեկ տող բաց թողնելով:
10. Մեկ տող բաց թողնելով՝ ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը՝ ներածական, բուն տեքստային և ամփոփիչ մասերից բաղկացած: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից: Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր: Ներմուծված պատկերները պետք է լինեն 300 dpi որակի:
11. Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում, աճման կարգով՝ 10 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1: Հղման տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (Alignment: Justify): Պարբերություններն սկսել 1 սմ խորքից.

ա. Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (Bold), այնուհետև աշխատանքի վերնագիրը, հատորը, հրատարակության վայրը, հրատարակչությունը, տարեթիվը և էջը:

բ. Երկուսից ավելի հեղինակների դեպքում՝ գրել առաջին երկու հեղինակների ազգանունները, անվան սկզբնատառերը, ապա «և ուրիշներ» արտահայտությունից հետո շարունակել նշված կարգի համաձայն:

գ. Ժողովածուի կամ հանդեսի դեպքում՝ հոդվածի վերնագրից հետո դնել // նշանը, ավելացնել ժողովածուի կամ հանդեսի վերնագիրը, շարունակությունը՝ նշված կարգով:

դ/ Եթե գիրքը թվայնացված է, տվյալների վերջում, փակագծի մեջ ավելացնել «ebook» բառը: Կայքին տրվող հղման դեպքում՝ վերնագրից հետո / նշանով գրել կայքի հասցեն, ապա փակագծում՝ կայքից օգտվելու ամսաթիվը, օր.՝ 02.11.2022:

ե. Համացանցային ռեսուրսներին հղվելու դեպքում՝ նշել հեղինակը (եթե առկա է), վերնագիրը, համացանցային աղբյուրը, փակագծում՝ կայքից օգտվելու ամսաթիվը, օր.՝ 02.11.2022:

12. Հոդվածի վերջում, մեկ տող բաց թողնելով, «REFERENCES» արտահայտության տակ պարտադիր զետեղվում է հոդվածում օգտագործված ոչ լատինատառ գրականության լատիներեն տառադարձմամբ տարբերակը՝ այբբենական դասավորությամբ՝ փակագծում նշելով բնագրի լեզուն, օր.՝

REFERENCES

1) Hakobyan M.,Yerker, h.5, Ye., «GAA hrat.», 1971. (In Armenian),
2) Karpova K., Trudi, M., «Izd. Svet», 1977. (In Russian).

Գրախոսման և հրատարակման կարգը

1. Պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով չհրապարակված աշխատանքներ (գիտական հոդվածներ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը (տե՛ս տեխ. պահանջներ, կետ 1), հրատարակման պահանջներին, ունեն գիտական նորույթ և արդիականություն:
2. Հոդվածի հրատարակման որոշումը վերապահված է խմբագրակազմին:
3. Խմբագրակազմը հոդվածն ընդունում է էլեկտոնային փոստի միջոցով:
4. Ներկայացված հոդվածները գրախոսվում են:

   ա. Խմբագրակազմը մեկ ամսվա ընթացքում հոգում է աշխատանքի գրախոսումը կամ իր անդամներից մեկի, կամ անկախ փորձագետի միջոցով: Գրախոսումն անանուն է՝ թե՛ հեղինակի, թե՛ գրախոսի համար:
5. Գրախոսի բացասական եզրակացության դեպքում խմբագրակազմը կամ մերժում է հոդվածի տպագրումը, կամ առաջարկում հեղինակին լրամշակել, կամ այն ուղարկում է մեկ այլ՝ անկախ փորձագետի գրախոսության՝ նախապես տեղեկացնելով հեղինակին:
6. Գրախոսի դրական եզրակացության դեպքում խմբագրակազմը ձեռնարկում է աշխատանքի նախապատրաստումը հրատարակության՝ այն համապատասխանեցնելով պահանջվող խմբագրական չափանիշներին: Հրատարակման պահանջներից բխող տեխնիկական փոփոխությունները և ուղղումները հեղինակի հետ չեն համաձայնեցվում:

Հոդվածատուից ակնկալվող գիտական էթիկա

1. Հոտևողական վերաբերմունք՝ հեղինակային իրավունքի նկատմամբ: Արգելվում է գրագողությունը՝ ուրիշի աշխատանքային արդյունքների հրատարակումը սեփական անվան ներքո, առանց համապատասխան աղբյուրի հղման ներկայացնելը, ինչպես նաև ոչ հավաստի տեղեկատվության, տվյալների կամ փաստերի օգտագործումը և հրատարակումը:
2. Հեղինակը պատասխանատու է հղումների և մեջբերումների ստույգության ու հավաստիության համար և պարտավոր է խմբագրության առաջարկությամբ ուղղել հոդվածում նկատված թերությունները:
3. Խմբագրությունը հրատարակված հոդվածում նկատված անճշտությունների կամ վրիպակների համար պատասխանատվություն չի կրում:

Հոդվածներն ուղարկել armmonuments@gmail.com էլեկտրոնային հասցեին: